ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Հետազոտությունների բաժին

«Նոր չափորոշչի և ծրագրերի ներդրման արդյունքների գնահատումը

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում»
հետազոտության ամփոփ զեկույց

2025 թ.

Հետազոտության շրջանակ

Ղեկավարվելով «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 24-րդ հոդվածի առաջին մասի 15-րդ կետի պահանջով[1] և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N764 որոշման հավելվածի 8-րդ կետի պահանջը[2]՝ 2022-2023 ուսումնական տարվանից Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություններում/այսուհետ նուհ/ ներդրվել է նախադպրոցական կրթական համալիր ծրագիր:

Ծրագրի 1-ին փուլում՝ 2022-2023 ուսումնական տարում փորձարկվող ծրագրին միացել է ՀՀ 60 նուհ:

Երկրորդ փուլում՝ 2023-2024 ուստարում՝ 130 նուհ:

Երրորդ փուլում՝ 2024-2025 ուստարում՝ 352 նուհ:

Ստորև ներկայացվում է ծրագրի 2-րդ փուլում՝ 2023-2024 ուստարում փորձարկվող ծրագրին միացած 14 նուհի դիտարկման արդյունքները:

Հետազոտության նպատակ

Պարզել նախադպրոցական կրթական համալիր ծրագրով ներդրված գնահատման նոր համակարգի մասին մանկավարժների

- վերաբերմունքը,
- իմացությունը,
- գնահատման կիրառման արդյունավետությունը:

Ընտրանքի ռազմավարություն

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ Տավուշի, Արարատի, Կոտայքի մարզերում և Երևան քաղաքում:

2-րդ փուլի ընտրանքը 1-ի տրամաբանական շարունակությունն է, քանի որ տվյալ մարզերում հետազոտվել էր 2022-2023թթ.-երին ներդրված գնահատման նոր համակարգի փորձարկման արդյունքները հետազոտվել էին, հետևաբար՝ նպատակահարմար էր հետազոտել նաև 2-րդ փուլի նուհերի ներդրման արդյունքները:

Հետազոտության գործիքներ

[1] ՀՀ ՕՐԵՆՔԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
[2] ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցաթերթ՝ նախատեսված մեթոդիստների և մանկավարժների համար, զրույց տնօրենների և մանկավարժների հետ:

Նախադպրոցական կրթական համալիր ծրագրով ներդրված գնահատման նոր համակարգի ծրագրի II փուլում ընդգրկված նուհերի հետազոտության արդյունքների վերլուծություն

Քանակական վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ չնայած կրթական քաղաքականության կանոնակարգումներին, մասնագիտական վերապատրաստումներին ու մենթոր նուհերի աջակցություններին, գնահատման

նոր համակարգի 2-րդ փուլի ներդրման ընթացքի արդյունքները պայմանավորված են թե արտաքին գործոններով՝ իրականացված վերապատրաստումներ, ընթացիկ աջակցություններ, թե ներքին՝ նուիի մասնագիտական ներուժ, տնօրենի վարած քաղաքականություն, մեթոդիստի փորձառություն և տրամադրվածություն և այլն: Ստորև ներկայացվում են ՀՀ Տավուշի, Արարատի, Կոտայքի մարզերում և Երևան քաղաքում երկրորդ փուլում գնահատման նոր համակարգին անցած 14 նուիերի 109 հարցվողների քանակական վերլուծության արդյունքները՝ տոկոսային հարաբերությամբ.

1. **Հարցվողների պատասխանները, այն հարցին, թե մինչ փորձարկվող ծրագրի շրջանակում ընդգրկվելը, կիրառել են գնահատման այլ համակարգ, բաշխվել են այսպես.**

- Այո – 70 հարցվողներ - 64%
- Ոչ – 39 հարցվողներ - 36%
- Եթե այո, ապա 2-3 նախադասությամբ մանրամասնել:

Գծապատկեր 1



Մեկնաբանություններ

1. «Գնահատումը իրականացվել է ըստ ոլորտների:»
2. «Գնահատումը իրականացվել է «Քալ առ քայլ» ծրագրի շրջանակներում տրամադրված դիտարկման թերթիկներով:»
3. «Կատարվել են նշումներ և դրանց հիման վրա կազմակերպվել է երեխայի հետագա զարգացման ընթացքը:»
4. «Կատարվել է եռամսյակային գնահատում, գույների փոխարեն՝ օգտագործելով V նշանը:»
5. «Վերանայել սաների քանակը հատկապես այն խմբերում, որտեղ կան ԿԱՊԿՈՒ երեխաներ:»
6. «Ձևավորող գնահատման գործիքակազմի ավելացում:»
7. «ԿԱՊԿՈՒ երեխաների համար գնահատման այլ սանդղակ լինի:»
8. «Գնահատման գործընթացի գործիքները լինեին ավելի ճկուն:»
9. «Ձևավորող գնահատումը չլիներ թեմատիկ:»
10. «Գնահատման ստուգաթերթերում հարցերը լինեն չկրկնվող. կան հարցադրումներ, որոնք կարող են լինել 1 կետում, բայց նույն հարցը տարբեր շարադրանքով 3 կետում նշված է:»
11. «Կարելի է վերանայել վերջնարդյունքները, քանի որ կան իրար կրկնող կետեր:»

Հարցվողների մեծ մասը՝ 64 %-ը, մինչ գնահատման նոր համակարգի ներդրումը տարբեր կազմակերպությունների, վերապատրաստումների արդյունքում ձեռք բերած գնահատման գործիքների, ձևաթղթերի միջոցով են իրականացրել գնահատում: Մյուս մասը՝ 36%-ը չեն իրականացրել:

2. 109 հարցվողներից գնահատման նոր համակարգի նկատմամբ իրենց վերաբերմունքը արտահայտել են այսպես.

- Լավ – 83 հարցվողներ - 76%
- Վատ – 9 հարցվողներ - 8%
- Չեզոք – 17 հարցվողներ - 16%

Գծապատկեր 2



Հետազոտության նպատակներից մեկն էր պարզել նուիերի մանկավարժների վերաբերմունքը գնահատման նոր համակարգի վերաբերյալ, որից պարզվել է, որ հարցվածների մեծամասնությունը՝ մոտ 76%-ը ունի դրական վերաբերմունք:

3. Այն հարցին, թե գնահատման նոր համակարգը ինչպիսի ազդեցություն է ունեցել սաների առանձնահատկությունների բացահայտման գործընթացում, հարցման արդյունքները բաշխվել են այսպես.

- Ամբողջովին դրական – 23 հարցվողներ - 21%
- Հիմնականում դրական – 48 հարցվողներ - 44%
- Մասամբ դրական – 27 հարցվողներ – 25 %
- Ոչ մի կերպ չի ազդել – 11 հարցվողներ - 10%

Գծապատկեր 3



Ուշագրավ է, որ զրույցի ընթացքում դաստիարակների պատասխանները համընկել են քանակական հետազոտության արդյունքներին:

«Ավելի լավ ենք ճանաչում երեխաներին:»

«Սաները ցանկանում են պատասխանել և արժանանալ աստղիկների:»

«Բացահայտում ենք սաների ուժեղ և թույլ կողմերը:»

Ստացվում է, որ 109-ից 71 մանկավարժ գիտակցում ու կարևորում է գնահատման նոր համակարգի դերը սաների առանձնահատկությունների բացահայտման գործում: Այնուամենայնիվ՝ 38 հարցվող գտնում է, որ նոր համակարգը մասամբ է ազդել կամ չի ազդել ոչ մի կերպ: Կտրուկ դեմ արտահայտվողների թիվը համեմատությամբ առաջին փուլի արդյունքների աճել է՝ 6-ով: Սա կարող է պայմանավորված լինել մի շարք հանգամանքներով, օրինակ՝ վերապատրաստումների նկատմամբ ոչ պատասխանատու վերաբերմունքով, թյուրընկալումներով, նախորդ փուլում գործընթացը կիրառող գործընկերների ոչ դրական արձագանքներով:

4. Այն հարցին, թե ինչ պարբերականությամբ են կիրառում գնահատման երեք տեսակները, հարցվողները պատասխանել են հետևյալ կերպ

Հայտորոշիչ գնահատում- Ճիշտ պատասխան - 100 %

Ի տարբերություն 1-ին փուլերի նուհերի արդյունքների՝ այս փուլի նուհերի մասնագետները միանշանակ պատկերացնում էին հայտորոշիչ գնահատման էությունը և կիրառման պարբերականությունը:

Գծապատկեր 4



Ձևավորող - Ճիշտ պատասխան - 52 հարցվող - 47.7 %

Սխալ պատասխան - 57 հարցվող- 52.3 %

Ուշագրավ է, որ առաջին փուլի հետազոտության վերծության տվյալներով 109 հարցվողներից 44-ը՝ հարցվողների 40%-ն էր ճիշտ պատկերացնում ձևավորող գնահատման կիրառելիությունը, 2-րդ փուլի արդյունքները ավելի գոհացուցիչ են, դա կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով, այդ թվում՝ արդեն փորձարված նուիերի փորձի փոխանցմամբ և դրական արդյունքների վրա հենվելով:

2023-2024 ուստարում ձևավորող գնահատման կիրառման պարբերականությունը եղել է եռամսյակային, սակայն, որոշ նուիեր լսելով առաջիկա փոփոխությունների մասին, գնահատումը իրականացրել են կիսամյակներով, քանի որ այս տարբերակը նվազեցրել է գրագրության ծավալը:

Գծապատկեր 5



Ամփոփիչ - Ճիշտ պատասխան - 100 %

Գծապատկեր 6



Ուշագրավ է, որ ամփոփիչ գնահատման կիրառելիությունը 100%-ով պատկերացնում են բոլոր 2 փուլերի նուհերի մանկավարժները: Դա կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ այն իրականացվում է 1 անգամ, հեշտ է ամրագրել և իրականացնել, կան պատրաստի բնութագրիչներ, որոնցից օգտվում են մանկավարժները: Այս արդյունքը գալիս է ապացուցելու դեռևս 1-ին փուլում հնչեցրած այն տեսակետը, որ ձևավորող գնահատման արդյունքը պայմանավորված է ոչ չիմացությամբ, այլ իրականացման ծավալով, որից խուսափում են մանկավարժները և իրենց զրույցներում բոլորը անխտիր նշում էին այդ մասին:

5. Այն հարցին, թե ձևավորող գնահատման գործիքները բավարա՞ր են գնահատելու սաների ուժեղ և թույլ կողմերը, հարցվողները տվել են հետևյալ պատասխանները:

- Ամբողջովին բավարար են – 26 հարցվողներ – 23%
- Հիմնականում բավարար են – 58 հարցվողներ - 54%
- Մասամբ բավարար են – 24 հարցվողներ - 22%
- Բավարար չեն – 1 հարցվողներ – 1%

Գծապատկեր 7



Մեկնաբանություններ

1. «Ավելորդ է:»

2. «Բացահայտում ենք սաների ուժեղև թույլ կողմերը:»
3. «Մասամբ բավարար են, բայց ամեն պարապմունքին անհրաժեշտ է լինում նորություն:»
4. «Դա նաև ոգևորում է:»
5. «Սանն ավելի ուշադիր է:»
6. «Երբ գույներով ենք գնահատում, պարզ է դառնում սաների առաջադիմությունը:»

Հարցվողների շուրջ 77%-ը՝ ավելի շատ քան 1-ին փուլում, գտնում է, որ ձևավորող գնահատման գործիքները ամբողջովին կամ հիմնականում բավարար են, եթե առաջին փուլում 7 հարցվող էր բոլորովին դեմ արտահայտվել, այս փուլի նուիերի հարցվողներից 1 էր դեմ արտահայտվել: Այնուամենայնիվ՝ 22 %-ի կարծիքով կարիք կա ձևավորող գնահատման գործիքների հստակեցման և նոր գործիքների:

6. Ի՞նչ առաջարկություններ ունեք գնահատման գործընթացը բարելավելու համար:

Առաջարկությունները ներկայացվում են խմբավորված եղանակով՝ արտահայտված տոկոսային հարաբերությամբ, ստորև կատարված են մեջբերումներ.

1. 40.5 % - ազատել ավելորդ գրագրությունից

2. 23%-մեծացնել վերապատրաստումների պարբերականությունները

3. 16 % - տրամադրել ուսումնաօժանդակ ձեռնարկներ

4. 11.3 % - ձևավորող գնահատման պարբերականությունը նվազեցնել

5. 9.2 % - տրամադրել նոր գործիքներ

Գծապատկեր 8



1. «Գնահատումն իրականացվի կիսամյակային:»
2. «Ապահովել թեմաներին համապատասխան գրականություն կամ ուղեցույց:»
3. «Վերանայել խմբում սաների քանակը:»
4. «Վերանայել սաների քանակը հատկապես այն խմբերում, որտեղ կան ԿԱՊԿՈՒ երեխաներ:»
5. «Ձևավորող գնահատման գործիքակազմի ավելացում:»
6. «ԿԱՊԿՈՒ երեխաների համար գնահատման այլ սանդղակ լինի»:
7. «Գնահատման ստուգաթերթերում հարցերը լինեն չկրկնվող. կան հարցադրումներ, որոնք կարող են լինել 1 կետում, բայց նույն հարցը տարբեր շարադրանքով 3 կետում նշված է:»
8. «Կարելի է վերանայել վերջնարդյունքները, քանի որ կան իրար կրկնող կետեր:»
9. «Պարապմունքի համար ժամանակի կորուստ է: Կարելի է գնահատել 2 անգամ: Ունենք ԿԱՊԿ սաներ, որոնք դժվարացնում են պարապմունքի ընթացքը: Աջակցող անձանց թիվն ավելացնել:»
10. «Կրճատել գնահատումը և թողնել տարվա սկիզբ և ավարտ:»

11. «Գրառումների փոխարեն աշխատի Սանի հետ, զարգացնի նրա խոսքը: Կարիք կա ձեռնարկներ և համապատասխան գրականության:»
12. «Ունենք սեմինարի կարիք և չունենք համապատասխան ձեռնարկներ: Սաների թիվը մեծ է:»
13. «Հայտորոշիչ գնահատման ժամկետը երկարացնել:»
14. «Գնահատման նոր գործիքակազմ ստեղծել՝ հաշվի առնելով սաների առանձնահատկությունները:»
15. «Գնահատման գործիքակազմը ընդլայնել, հատկապես 1-ին և 2-րդ կրտսեր խմբերի սաների համար:»
16. Ավագ խմբի ավարտին բնութագիր գրելն ավելորդ է, քանի որ դպրոցները չեն պահանջում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2023-2024թթ. վերապատրաստված մանկավարժների և մեթոդիստների պատասխաններից ելնելով՝ կարելի է եզրակացնել՝

1. Հարցվողների վերաբերմունքը գնահատման նոր համակարգի վերաբերյալ դրական է, քանի որ 109 հարցվողների 83-ը, այսինքն՝ ճնշող մեծամասնությունը պատասխանել է՝ *«Այո, գնահատումը արդյունավետ է»:*
2. 2-րդ փուլում ընդգրկված նուհերի մասնագետները ավելի լավ էին պատկերացնում գնահատման 3 տեսակների առանձնահատկությունները, եթե 1-ին փուլի մանկավարժների պատասխաններում հայտորոշիչ գնահատման մասին կային մի քանի սխալ պատասխաններ, այս դեպքում բոլորը ճիշտ էին պատասխանել, բարձր էին նաև ձևավորող գնահատման մասին արդյունքները:
3. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրական արդյունքներին՝ սաների առանձնահատկությունների բացահայտման գործում 109 մանկավարժներից 38-ը գնահատման դերը գրեթե չի կարևորում. դա

նշանակում է, որ այդքան խմբում գնահատումը արդյունավետ չի կարող իրականացվել:

4. Ամփոփիչ գնահատման առանձնահատկությունը բոլորը պատկերացնում և իրականացնում էին, սակայն դժգոհ էին դպրոցների մոտեցումից, քանի որ իրանք սաներին բնութագրում էին, իսկ դպրոցները չէին պահանջում կամ ընդունում նուիերի ամփոփաթերթերը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դաստիարակների և մեթոդիստների հետ զրույցի, պարապմունքների դիտարկման և լրացված հարցաթերթերի վերլուծության արդյունքում ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները

1. Հաճախակի իրականացնել սեմինարներ կամ խորհրդատվություններ մանկավարժների համար:
2. Ուժեղացնել մեթոդիստների ինստիտուտը:
3. Հնարավորինս գնահատման շատ գործիքներ տրամադրել մանկավարժներին:
4. Տրամադրել համապատասխան գրականություն և ձեռնարկ:
5. Ուժեղացնել մենթոր մանկապարտեզների համագործակցության արդյունավետությունը:
7. Հրահանգել դպրոցներին պահանջել սաների ամփոփիչ բնութագրերը:

ԿԶՆԱԿ հիմնադրամ

Հետազոտությունների բաժին

11.05.2025թ.